

պէս եւսերիոս Վարդ Կոստանդիսնոսի գիրքին մէջ Հեղինէին երուսաղէմ այցելութիւնը կը յիշատակէ, բայց ան ալ կը լռէ խաչի գիւտին վրայ. սակայն պէտք է նկատի առնել որ Կիւրեղ երուսաղէմացին որքան որ իր վերեւ յիշուած գիրքին մէջ չի յիշեր խաչին գիւտը, բայց ան շատ բացայայտ կը յիշատակէ խաչի երեւման առթիւ Կոստանդ կայսեր զբաժ մտնակին մէջ, — այդ նամակին վաւերականութիւնը անհերքելի է — թէ խաչը գտնուած է իր հօրը՝ Կոստանդիանոսի օրով, ինչպէս յիշեցինք. իսկ գալով Եւսերիոսի՝ ան ալ խաչի գիւտը կը յիշէ իր Քրոնիկոն գիրքին մէջ: Այս պատմիչները Հեղինէի ժամանակակից ըլլալով՝ կը տարուինք մտածել թէ խաչի գիւտին մէջ Հեղինէն հեռուէն կամ մօտէն դեր մը ունեցած պէտք է ըլլայ, մանաւանդ որ Դ. դարէն սկսեալ խիստ տարածուած է աւանդութիւնը քրիստոնեայ ժողովուրդներու մէջ, եւ մատենագրութիւնը ու եկեղեցական երգերը աւելի կը շեշտեն այս դադափարը, որուն մեծապէս կը ստտարէ Գիւտ խաչի տեղին վրայ կառուցուած Հայոց Ս. Լուսաւորիչ եկեղեցիին աւագ սեղանին մօտ, պատուհանաձեւ այն բացուածքը՝ որուն համար աւանդութիւնը կ'ըսէ թէ ան Հեղինէ թագուհիին նստած տեղն էր, եւ ուրիշ խաչին ծածկուած տեղին մէջ աշխատողներուն ան առատօրէն զբաժ կը հասցնէր՝ աւելի արագ յառաջ տանելու պեղումները: Աւանդութիւնը երբեմն կը փոխուի կամ չափազանցութեան կ'ենթարկուի, բայց խորքը կը մնայ անայլալ: Հայաստանեայց եկեղեցին այդ մասին ալ կը հետեւի քրիստոնէական ընդհանուր եկեղեցոյ ճամբուն, Ս. Յարութեան մէջ ունեցած իր եկեղեցիովը, տօնակարգովը եւ իր խաչի հին ներքողներովն ու երգերովը: Այս տողերուն իբր կնիք կը դնեմք մեր Խորենացիին հետեւալ խօսքերը (Բ. Գիրք, էջ 173) «... Յեւ այնորիկ առաջեաց զՀէղինէ զնայրն իւր յԵրուսաղեմ ի խնդիր պատուական Սաչին, զոր եւ եգիս իսկ զփրկական փայտն, հանդերձ հինգ բռնեոփն»:

